

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՄԵՂՎԱՐԹՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գլուխ 2. Մեղվաբուծության ոլորտի պետական կառավարումը

Հոդված 16. Մեղվաբուծության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Մեղվաբուծության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններն են՝

- 1) մեղվաբուծության զարգացմանը նպատակաուղղված հանրապետական եւ համայնքային նշանակության նպատակային ծրագրերի հաստատումը.
- 2) Հայաստանի Հանրապետությունում բուծվող մեղուների ցեղերի կատարելագործման, օգտագործման եւ անհետացման վտանգի տակ գտնվող ցեղերի գենոֆոնդի պահպանության պետական ծրագրերի հաստատումը.
- 3) մեղվաբուծության ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը.
- 4) մեղվաբուծության զարգացման տնտեսական խթանումը.
- 5) մեղրի եւ մեղվաբուծական այլ մթերքի ներկրման եւ արտահանման կարգի սահմանումը.
- 6) մեղրի մեջ հակաբիոտիկների, պեստիցիդների եւ ադոտոտոլ այլ նյութերի թույլատրելի մնացորդային քանակությունների սահմանումը.
- 7) սույն օրենքով սահմանված այլ իրավասություններ:

Հոդված 17. Մեղվաբուծության ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները

1. Մեղվաբուծության ոլորտում լիազոր մարմինը իրականացնում է հետեւյալ իրավասությունները.

- 1) մեղվաբուծության ոլորտում պետական քաղաքականության մշակումը եւ իրականացումը՝ համագործակցելով մեղվաբուծյժների հասարակական միավորումների եւ մեղվաբուծության զարգացման խորհրդի հետ.
- 2) մեղվաբուծության զարգացմանը նպատակաուղղված հանրապետական եւ համայնքային նշանակության նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը՝ համագործակցելով մեղվաբուծյժների հասարակական միավորումների եւ մեղվաբուծության զարգացման խորհրդի հետ.
- 3) Հայաստանի Հանրապետությունում բուծվող մեղուների ցեղերի կատարելագործման, օգտագործման եւ անհետացման վտանգի տակ գտնվող ցեղերի գենոֆոնդի պահպանության պետական ծրագրերի եւ տոհմային մեղվաբուծության զարգացման այլ միջոցառումների մշակումն ու իրականացումը՝ համագործակցելով մեղվաբուծյժների հասարակական միավորումների եւ մեղվաբուծության զարգացման խորհրդի հետ.
- 4) մեղվաբուծության ոլորտում պետական ստանդարտների, կանոնների եւ կարգերի սահմանումը.

- 5) մեղրատու մեղուների պահպանման եւ մեղվաբուծական մթերքի որակի ապահովման նպատակով անասնաբուժասանիտարական կանոնների պահպանման եւ մեղրի անասնաբուժասանիտարական փորձաքննության պետական վերահսկողությունը.
- 6) բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ մեղրատու մեղուների անվտանգ եւ բնականոն կենսակերպի ապահովումը.
- 7) մեղվաբուծության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությանն աջակցելը.
- 8) մեղվաբուծության ոլորտում մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման աշխատանքների համակարգումը.
- 9) մեղվաբուծության ոլորտում տոհմաբուծության, մայրաբուծության, մեղրատու մեղուների արգելոցների զարգացման աշխատանքներին աջակցությունը.
- 10) մեղրատու մեղուների հիվանդությունների, թունավորումների կանխարգելման, բուժման, այդ մեղուների գոյությանը սպառնացող վնասատուների դեմ պայքարի իրականացումը.
- 11) մեղվաբուծական մթերքի արտահանման եւ ներմուծման նկատմամբ վերահսկողության ապահովումը.
- 12) կեղծ մեղրի հայտնաբերման դեպքում դրա վաճառքի արգելումը.
- 13) մեղվաընտանիքներում հիվանդությունների կանխարգելման նպատակով անհապաղ միջոցների ձեռնարկումը՝ ընդհուպ վարակ տարածող մեղվաընտանիքների վերացումը.
- 14) մեղրատու մեղուների խնամքի եւ կերակրման անասնաբուժասանիտարական կանոնների հաստատումը.
- 15) մեղվաընտանիքների եւ մեղվանոցների գրանցման եւ հաշվառման կարգը սահմանելը.
- 16) ժամանակակից տեխնոլոգիաների մեթոդների կիրառման ներդրմանը եւ սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմանը նպաստելը.
- 17) աջակցությունը մեղվաբուծական մթերքի՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանմանը (այդ թվում՝ Եվրամիության երկրներ).
- 18) աջակցությունը մեղվաբուծությամբ զբաղվող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ ելնելով նրանից, որ մեղուների միջոցով պտղատու այգիների եւ դաշտերի մշակաբույսերի մեղվափոշոտման շնորհիվ դրանց բերքատվությունը եւ որակը բարձրանում են.
- 19) սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:
2. Մեղվաբուծության զարգացմանը նպաստելու նպատակով կարող է ստեղծվել մեղվաբուծության զարգացման խորհուրդ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Լիազոր մարմնի հետ մեղվաբուծության զարգացման խորհրդի համագործակցությունը իրականացվում է լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով: